## **TOOL 2:** IDENTIFY A DISCOURSE GENRES IN YOUR SUBJECT(S)
## **ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄ 2.** ՃԱՆԱՉԻՐ ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ՏԱՐԲԵՐ ՈՃԵՐԸ ՔՈ ԱՌԱՐԿԱՅՈՒՄ։

«Նկարագրել» բառը պատմության, աշխարհագրության կամ ճշգրիտ առարկաներում նույն իմաստը չունի: Պատմական գործչին, քաղաքական կամ որևէ այլ իրադարձություն նկարագրելու համար չեն պահանջվում նույն ճանաչողական գործողությունները, տեղեկատվության կազմակերպումը կամ լեզվական տարրերը: Ավելին, երբ աշակերտը տեքստ է ներկայացնում է պատմության դասին, դասարանի մյուս աշակերտները պետք է ունենան պատմություն առարկայի բնորոշ լեզվամտածողություն, մաթեմատիկայի դասին՝ գրեն, ինչպես մաթեմատիկա առարկայի աշակերտ: Բնութագրիչները և լեզվական տարրերը նույնը չեն լինի, եթե աշակերտին առաջարկեին լինել, օրինակ, լրագրող: Այս գործիքակազմը թույլ կտա ոչ լեզվական առարկայի ուսուցչին հայտնաբերել լեզվի այն կիրառությունները, որ հատուկ են իր առարկային: Սա աշակերտների կիրառության համար նախատեսված չէ: Երկրորդ սյունյակում (դասախոսական ոճ) բացատրվում է թե ինչպես օգտագործել յուրաքանչյուր բաժինը:

Ինչպես օգտագործել գործիքակազմ համար 2-ը

**Քայլ 1.** Ընտրեք պատմելու կամ գրելու տեքստձեր դասավանդած առարկայում (օր. մաթեմատիկայի խնդիր, պաստառ, փորձի բանավոր ներկայացում կամ դասագրքի նյութի ամփոփում)

**Քայլ 2.** Վերցրեք ներքևում բերված աղյուսակը և սկսեք լրացնել բաց թողնված դաշտերը ձեր ընտրած նյութին համապատասխան (անհրաժեշտության դեպքում լեզվի մասնագետի օգնությամբ)

Գործիքակազմ 2. պլանավորում

| | Ինչպես պարզել դասախոսական ոճը (ժանրը) ձեր առարկայում | |
|---|---|---|
| Ո՞վ է լսարանը | ... նկարագրել ուսուցողական դասախոսական ոճը (ժանրը) կախված նրանից, թե **ում է ուղղված թեման:** | |
| Ո՞րն է թեմայի նպատակը | ... նկարագրել ուսուցողական դասախոսական ոճը (ժանրը) կախված **տվյալ առարկայի գիտական չափորոշիչներից և լսարանից:** | |
| Ինչպե՞ս է թեման կառուցված | ... նկարագրել պաշտոնական դասախոսության ներկայացումը ընդգծելով մտքերի կազմակերպումը, որոշակի տարրերի տեղը, որոնք անհրաժեշտ են ոճին (ժանրին) (օր. Խնդրի ձևակերպումը, պատճառահետևանքային կապ, հետևությունների շղթան ...) | |
| Լեզվական ի՞նչ էլեմենտներից ես պետք է տեղյակ լինեմ | ...**ընդհանուր լեզվական բնութագրիչները**, որոնք անհրաժեշտ են խնդրի իրագործման համար ի լրացումն տվյալ ոճի (ժանրի): Այս ամենը ներառում է բայի ժամանակները, դերանունները, շաղկապների տեսակները... | ...**հնարավոր դժվարությունները (և ընկալման և վերարտադրման).** Շաղկապները, բայանունները, կրավորական սեռը, Առարկային հատուկ հասկացությունները, հոմանիշները, առօրյա ալեզուն հիմտ՝ տվյալ առարկայի լեզվի ... Եզրակացություններ կատարելը... |

## **TOOL 3:** COLLABORATE AND IDENTIFY DIFFERENCES IN SUBJECT-SPECIFIC DISCOURSE DEMANDS

## **ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄ 3.** ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԵԼ և ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼ ԱՌԱՐԿԱՅԻՆ ՀԱՏՈՒԿ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Այլ առարկաներ դասավանդողների մոտ լեզվի հետ կապված խնդիրների գիտակցումը զարգացնելու համար ստեղծված այս գործիքակազմը նախատեսված է տարբեր առարկաների ուսուցիչների համատեղ օգտագործման համար: Այն առաջարկում է ուսուցիչներին համեմատել իրենց դասավանդած առարկաների

խոսքային ոճերը: Այս գործիքակազմը կազմակերպված է առաջին գործիքակազմի կարգերին համապատասխան, բայց նաև թույլ տալիս է տարբեր ժանրերի պահանջների միջև միջառարկայական համեմատություններ անել:

Ինչպես օգտագործել այս գործիքակազմը.

**Քայլ 1.** Համագործակցեք գործընկերոջ հետ, որ դասավանդում է մեկ այլ առարկա (կամ ընտրեք երկու առարկա, որոնք դուք դասավանդում եք)

**Քայլ 2.** Ընտրեք բանավոր կամ գրավոր տեքստ (օր. մաթեմատիկայի խնդիր, պատմ․, փորձի բանավոր ներկայացում կամ դասագրքի նյութի ամփոփում)

**Քայլ 3.** Նայեք ներքևում բերված աղյուսակին և լրացրեք սյունակները ձեր առարկային համապատասխան

**Քայլ 4.** Արտացոլեք ընդհանուր դրույթները և տարբերությունները և փորձեք այն կիրառել դասապրոցեսում

| | Ինչպես վերլուծել գրավոր շարադրանքը պատմության դասագրքից: | | Ինչպես վերլուծել տեքստային խնդիրը մաթեմատիկայի դասագրքից: | | Ընդհանրություններ և տարբերություններ առարկաների միջև |
|---|---|---|---|---|---|
| Ո՞վ է լսարանը | աշակերտները | | աշակերտները | | |
| Ո՞րն է թեմայի նպատակը | Շարադրել պատմական դրվագը | | Նկարագրել խնդիրը և ընդգծել որոնելին. Տալ ցուցումներ | | |
| Ինչպե՞ս է թեման կառուցված | **Ներածություն,** որը նկարագրում է սկզբնական իրավիճակը, սահմանում թեման և ժամանակագրական սահմանափակումները **Մի քանի պարբերություն** հիմնական գաղափարի մասին՝ նշելով գործող անձանց, ամսաթվերը և իրադարձությունները **Եզրահանգում**, որը ձևավորում է վերջնական իրավիճակը և հետևություններ և/կամ կանխատեսումներ անում | | **Ներածություն,** որը նկարագրում է սկզբնական տվյալները և պայմանները, որոնք պետք է օգտագործվեն խնդրի լուծման ընթացքում **Ցուցումներ այն մասին,** թե ինչ պետք է գտնել | | |
| Լեզվական ի՞նչ էլեմենտներից պետք է տեղյակ լինի առարկայի դասավանդողը | **…ընդհանուր լեզվական բնութագրիչները,** Պատմողական, հրամայական, գրված ներկա ժամանակով, օգտագործվում է երրորդ դեմքի եզակի կամ հոգնակի թիվ, չի օգտագործվում ապառնի ժամանակը փոփոխություն կատարող բայեր. բացթողնել, | **…հնարավոր դժվարությունները (և ընկալման և վերարտադրման).** շաղկապեր (Շնորհիվ), բայանուններ (առաջացնում, ստեղծում), դասավանդվող առարկային բնորոշ հասկացություններ (արշավախումբ, ճակատամարտ, նվաճում, կայսրություն …), Հոմանիշներ (վերնագիր | **…ընդհանուր լեզվական բնութագրիչները,** Փաստացի տեքստգրված ներկա ժամանակով, օգտագործվում է երրորդ դեմք, անվանողական արտահայտություններ, կրավորական կառույցներ: Ուրքանչյուր բառ կարևոր է: Ցուցումներ արտահայտող հրամայական եղանակի բայեր. գտիր, | **…հնարավոր դժվարությունները (և ընկալման և վերարտադրման).** Տեսողական կամ նպաստող այլ նյութի (նկար, տեսանյութ կամ միայն լեզվական …)բացակայությունը կամ պակասը, Տեղեկատվության չափից ավելի խտությունը, սիմվոլների լեզուն, դերանունների գործածությունը (ինչի՞ն է վերաբերվում «այն» դերանունը «այն ընդունում է …ձևը» նախադասությունում) | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | դառնալ, առաջացնել, հաղթել<br><br>Շնորհիվ, որովհետև, դրա համար, բայց, ինչևէ, այդ դեպքում, վերջապես<br><br>Փոփոխություն, առաջացում, ձևափոխում | կամ կարող է լինել տիտղոսագիր), Առարկայի լեզուն: (Իր անհամար նվաճումները հսկայական կայսրության և նաև նոր քաղաքակրթության առաջացման, (հունական քաղաքակրթության) առաջացման պատճառ դարձան. հմմտ՝ առօրյա ա-խոսակցական ոճի հետ. Նա հաղթել է շատ ճակատամարտեր, դրա համար էլ երկիրը դարձրել է շատ մեծ: | ձևափոխիր, դուրս բեր (կարող են լինել հարցական բառեր. Ինչքա՞ն է, ի՞նչ է…).<br><br>Մաթեմատիկական սիմվոլների լեզուն դասավանդման լեզվի հետ կապելու կարողություն *(C=aF+b).*<br><br>Մաթեմատիկական բառերի և հասկացությունների օգտագործում՝ գծային կախվածություն, հաստատուններ, կոտորակային, ձևափոխել, ջերմաստիճանային սանդղակը (կարող է լինել, փոփոխական, լուծում, բազմապատկում, տոկոսներ…). Բառերը և հասկացությունները ճշգրիտ են և ոչ երկիմաստ. | Առարկային հատուկ հասկացությունները (գծային կապ, հաստատուններ, կոտորակային, փոխարինել, ջերմաստիճանային սանդղակ) Առօրյա լեզուն հմմտ՝ առարկայի ակադեմիական լեզվի (գծային կախվածություն հմմտ՝ կապ-ի): | |

## **TOOL 4:** DESIGN TASKS TO INTEGRATE CONTENT AND LANGUAGE OBJECTIVES

## **ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄ 4.** ՁԵՎԱՎՈՐԵԼ ԳՈՐԾԻՔՆԵՐ ՀԱՄԱՏԵՂԵԼՈՒ ԱՌԱՐԿԱՅԻ և ԼԵԶՎԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ:

Այս գործիքակազմը, որը հիմնված է Մինեսոտայի Համալսարանի՝ լեզուների յուրացման և խորացված հետազոտման կենտրոնի դոկտոր Տառա Ֆորտունի ձևավորած բանաձևի վրա, ցույց է տալիս առարկայի թեմատիկ նպատակները լեզվական նպատակների ձևափոխելու պարզ, բայց արդյունավետ ուղին: Ուսուցիչներից պահանջվում է արտացոլել լեզվական բնութագրիչները, գործառույթները և բառապաշարը, որը անհրաժեշտ է աշակերտին թեմատիկ նպատակները հասկանալու կամ արտահայտելու համար: Լեզվական բնութագրիչները կարող են լինել բայի ժամանակաձևեր կամ այլ քերականական կառուցվածքներ, որը աշակերտը, ըստ մեզ, պետք է օգտագործի: Գործառույթը գործողություն է, որը նրանք պետք է օգտագործեն (օր. նկարագրեն), և բառապաշարը, որը կարող է ընդգրկել ինչպես ակադեմիական լեզուն (օր. քլորոֆորմ, կազմություն) այնպես էլ՝ դասախոսական տերմինները (օր. ինչևիցե, այդ դեպքում, որպես արդյունք): Այս գործիքակազմը թույլ է տալիս ուսուցիչներին դասավանդման լեզուն դարձնել ավելի պարզ և ճշգրիտ, ոչ միայն իրենց օգտագործման, այլ նաև նոր թեմայից առաջ աշակերտներին ներկայացնելու համար:

**Քայլ 1.** Պարզել, թե աշակերտները ինչ պետք է կարողանան

**Քայլ 2.** Պարզել ձեր թեմայի հիմնական գաղափարը

**Քայլ 3.** Պարզել լեզվական նպատակները

**Քայլ 4.** Կազմել առաջադրանք, որը կմեկտեղի թեմայի և լեզվի նպատակները

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

<table>
<tr><td>Բովանդակության նպատակները</td><td colspan="3">ԳԻՏԵԼԻՔ և ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ. Աշակերտն ի վիճակի է շարադրել Ալեքսանդր Սանկեռնացու արշավանքների մասին գրավոր ձևով<br>ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ. Նվաճող և նվաճումներ</td></tr>
<tr><td>Ճանաչողական գործողություն</td><td colspan="3">Աշակերտը պետք է ընտրի տեղեկատվությունը, դասակարգի և կապակցի, գտնի պատճառահետևանքային կապը՝ հիմնվելով եղած փաստերի վրա:</td></tr>
<tr><td>Լեզվի նպատակները</td><td>Գործառույթ<br>Շարադրել</td><td>Ընդհանուր լեզվական բնութագրիչները.<br>3-րդ դեմք, եզակի թիվ, ներկա ժամանակի գործածում</td><td><u>Բառապաշար</u><br>նվաճել/ձեռք բերել, տարածք, նվաճող, նվաճում …</td></tr>
<tr><td colspan="4">ԽՆԴԻՐ. Վերապատմել Ալեքսանդր Սանկեռնացու նվաճումների մասին ներկա ժամանակի 3-րդ դեմքով, եզակի թվով, <u>օգտագործելով նվաճել բայը, նվաճող, նվաճումներ, տարածքներ և կայսրություն բառերը</u></td></tr>
</table>

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

<table>
<tr><td>Բովանդակության նպատակները</td><td colspan="3">ԳԻՏԵԼԻՔ և ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ. Աշակերտն ի վիճակի է գնահատել լուծման հիմնավորված և իմաստալից լինելը<br>ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ. սանդղակ, գծային կախվածություն</td></tr>
<tr><td>Ճանաչողական գործողություն</td><td colspan="3">Աշակերտը պետք է մշակի տրված տվյալները, ցույց տա խնդրի լուծման ուղիները, ստանա պատասխանները և հիմնավորի դրանք</td></tr>
<tr><td>Լեզվի նպատակները</td><td>Գործառույթ<br>Բացատրել խնդիրը լուծելու համար արված քայլերը</td><td>Ընդհանուր լեզվական բնութագրիչները<br>Ներկա ժամանակի, 1-ին դեմքի օգտագործումը, առարկային բնորոշ բառերն ու հասկացությունները</td><td>Բառապաշար<br>արտադրյալ (3*40), հավասար է (=), ջերմաստիճանային սանդղակ, գծային, աստիճան, հաստատուն, արժեք …</td></tr>
<tr><td colspan="4">ԽՆԴԻՐ: Բացատրել խնդիրը ներկա ժամանակի 1-ին դեմքով, օգտագործելով հավասար լինել (հավասար է), փոխարկել բայերը: Տեքստում գտնել արտադրյալ (3*40), ջերմաստիճանային սանդղակ, գծային, աստիճան, հաստատուն, արժեք և այլ բառերը: Բացատրել խնդիրը լուծելու համար արված քայլերը:</td></tr>
</table>

## TOOL 5: 5 STEPS TO DIFFERENTIATE LANGUAGE OBJECTIVES

## ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄ 5. ԼԵԶՎԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ՏԱՐԲԵՐԱԿԵԼՈՒ 5 ՔԱՅԼԵՐԸ

Մինչդեռ 1-ին և 2-րդ գործիքակազմերը օգնում են ուսուցչին պարզել թեմատիկ/լեզվական նպատակները, այս գործիքակազմը թույլ է տալիս իրապես տարբերակել հմտությունների ամենացածր մակարդակ ունեցող աշակերտներից եղած սպասելիքները: Այս ձևով ուսուցիչները կարող են ուղղորդել աշակերտներին դեպի թեմատիկ նպատակների յուրացումը, շարունակելով զարգացնել ակադեմիական լեզուն: Այս գործիքակազմը նախատեսված է ուսուցչի համար: Այն սկսվում է թեմատիկ նպատակների պարզաբանմամբ և շարունակվում

լեզվական նպատակների ձևակերպմամբ (առաջնային՝ բառապաշարի ձևավորմամբ), ինչը հասանելի է A2 և B1 մակարդակ ունեցող աշակերտներին: Այսպիսով, լեզվի մակարդակը հարմարեցված է, բայց ուսուցման թեմատիկ նպատակները մնում են նույնը:

<table>
<tr><td>Քայլ 1: սահմանել թեմայի հիմնական գաղափարը</td><td colspan="2">Զավթիչ (Ալեքսանդր Մակեդոնացի)</td></tr>
<tr><td>Քայլ 2: գրել տվյալ գաղափարի սահմանումը</td><td colspan="2">Մարդ, ով ունեցել է բազմաթիվ նվաճումներ, պատերազմների արդյունքում գրավել է տարածքներ: Որոշակի նվաճումների հիման վրա հիմնվում են կայսրություններ:</td></tr>
<tr><td>Step 3: սահմանել նպատակադրված ակադեմիական լեզուն</td><td colspan="2">Բայեր - գրավել կամ նվաճել:<br>Գոյականներ - նվաճող, նվաճում, տարածքներ կամ կայսրություններ, պատերազմ, ճակատամարտ, հաղթանակ:</td></tr>
<tr><td>Step 4: իմ աշակերտների առօրյա-խոսակցական լեզվի ո՞ր մասը կարող է որպես հիմք ծառայել այս հասկացության ընկալման և արտահայտման համար</td><td colspan="2">Ճակատամարտել, ճակատամարտ, հաղթել, պատերազմ, պայքար:</td></tr>
<tr><td><u>Step 5:</u><br>Աշակերտի հնարավոր գրավոր շարադրանքը</td><td>A2<br>Նա կռվում է և պատերազմ է սարքում:<br>Նա տարածքներ է նվաճում:<br>Նա նվաճող է:<br>Նա կառուցում է կայսրություն:<br><br>-> պարզ ձևակերպումներով թվարկում</td><td>B1<br>Զավթիչը առաջնորդ է, որը պատերազմներ է սկսում տարածքներ նվաճելու նպատակով:<br>Նա հաճախ հիմնում է կայսրություն:<br><br>-> ավելի բարդ նախադասություններ, շաղկապված հետևանքներ, նախադասությունների տարբեր կառուցվածքներ</td></tr>
</table>